

Ռ. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

XVII դ. Արևելքի, հատկապես Հնդկաստանի կյանքին լավ ծանոթ Կլավդիոս Բուկոնենը գրում է, թե հայերը հաստատված են Արևելքի բոլոր քաղաքներում: «Նրանք Արևելքի հիմնական վաճառականներն են և Կանտոնից մինչև Կ. Պոլիս անընդհատ շարժման մեջ են: Հայերի ընդհանուր նկարագիրը հարուստ, աշխատասեր և ձեռներեց ժողովուրդ լինելն է: Նրանք հաստատված են Հնդկաստանի բոլոր գլխավոր վայրերում անգլիացիների այստեղ գալուց շատ առաջ: Ուր որ նրանք գաղթում են, հիմնում են եկեղեցիներ և քրիստոնեական կրոնի տոներն ու հանդիսությունները վայելչորեն են պահում»¹: «Նրանք այնքան մեծ դիրք ու համարում ունենին Հնդկաստանում, որ բոլոր քրիստոնյաները՝ հույները, ասորիները և մյուսները հայեր էին ճանաչվում»²,— Ելում է մեկ այլ արևելագետ:

Հայերը Հնդկաստան էին գնում երկու ուղիով: Դրանցից մեկը ծովային ուղին էր: Նրանք նավ էին նստում Բենդեր-Բուշերում կամ Բասրայում, այի էին իջնում Սուրաթում, որոշ կանգառից հետո ցրվում Հնդկաստանով մեկ, հատկապես հաստատվելով ծովափնյա քաղաքներում: Ցամաքային ուղին, որով հայերը Հնդկաստան էին մտնում, քաջածանոթ մետաքսի ճանապարհի մի հատվածն էր, որն Արևմուտքը կապում էր Հնդկաստանի հետ: Առևտրական այդ մայրուղին Հնդկաստան էր մտնում Աֆղանստանից և Քաշմիրի վրայով ու Գանգեսի հովտով իջնում դեպի հարավ, դեպի Դաքքա: Այս ուղու մի ուրիշ ճյուղը բաժանվում էր Լահորից և գնում դեպի հարավ-արևմուտք՝ Մոլթանի ուղղությամբ, և Ինդոսի ափերով իջնում ավելի հարավ:

Հնդկահայ մնայուն գաղթօջախների ստեղծման և բարգավաճման գործին զգալիորեն նպաստել է մեծ Մողոլի բարեմիտ գահակալներից մեկը՝ Ջալալուդդին Աքբարը (1556—1605): «Առաջինը Աքբարն էր, Հնդկաստանի Մարկ Ակրելիտը,— գրում է Մ. Սեթը,— որը համոզեց հայերին եկող ու գնացող օտարականների վիճակը փոխել, որ զան ու հաստատվեն այս երկրի իր տիրույթների սահմաններում: Նա քաջատեղյակ էր առևտրի հարցերում հայերի ազնվությանն ու բանիմաստությանը: Աքբարն ուզում էր նրանց միջոցով զարգացնել իր երկրի առևտուրը»³: Մ. Սեթի վերջին տողերը, անշուշտ, չափազանցություն են: Այդ ժամանակ երկրի թե ներքին և թե արտաքին առևտրում արդեն գործում էր քավակահին զարգացած ու կուռ համակարգ: Աքբարի հիմնական նպատակն այլ էր: Նա լավ էր հասկանում, որ Հնդկաստան թափանցած պորտուգալացիներն արդեն շատ լուրջ և վտանգավոր մրցակիցներ են երկրի հատկապես ծովափնյա և արտաքին առևտրում: Մողոլները, չկարողանալով ուժով դուրս մղել պորտուգալացիներին (փորձերն անցնում էին անհաջող) Դամանից, Դիուից և պորտուգալացիների հաստատված մյուս շրջաններից, փորձում էին զույարարթից, արաբ, պարսիկ և այլ օտարերկրյա վաճառականներից ստեղծել միասնական բռունցք՝ պորտուգալացի վաճառականների դեմ: Եվ քանի որ այդ ժամանակ Հնդկաստանի տարբեր շրջաններում կային արդեն իսկ հաստատված հայ մեծահարուստ վաճառականներ, Աքբարն աշխատեց օգտագործել նաև նրանց հնարավորությունները⁴:

Հայկական սկզբնաղբյուրների վկայության համաձայն, Աքբարը հայերին սիրաշահելու նպատակով իր նոր մայրաքաղաքում՝ Ագրայում հողամաս հատկացրեց նրանց և նպաստավոր պայմաններ ստեղծեց հայերի անկաշկանդ գործունեության համար: Թե ինչ-

¹ Cl. Buchanan, Christian researches in Asia, Boston 1811. p. 244.

² Ed. Maclagan, The Jesuitis and the Great Mogol, London, 1832, p. 271.

³ Mesroby J. Seth, Armenians in India from the earliest times to the present days Calcutta, 1937, p. 1.

⁴ Ա. Չ. Աքբարի մասին, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, Ռ. Ա. էջ 447:

պիսի սիրալիրությունն է ցուցաբերել Աքքարը հայերի նկատմամբ՝ կարելի է դատել թեկուզ այն փաստից, որ Ագրայում ապրող հայերի համար այստեղ 1502 թ. պետական ծախսերով կառուցվել է հայկական եկեղեցի»⁵: «Ջայա բան լսելով,— գրում է Թովմաս Խոջամայան Ջուղայեցին,— եկին Նոր Ջուղայոյ վարդապետ, քահանայ, և շատ տուն հայեր յԱքքարաբատ, որ շատ պատուով ընդունելով թագավորին պարզեաց նոցա հինգ հազար բիզա գետին յԱքքարաբատ, վասն տուն, պարտեզ, և այլ պիտանի տեղեր շինելոյ»⁶:

Աքքարի կողմից հայերին մշտական բնակության հրավիրելու փաստը կասկածի ոչ մի տեղիք չի տալիս: Այն հաստատվում է հան այլ սկզբնաղբյուրներով: Մեզ անծանոթ աղբյուրի վրա հենվելով՝ Հնդկաստանում հրատարակվող «Ազգասերը» հավաստում է, որ այն բանից հետո, երբ Աքքարի կողմից հայերը բնակության համար ստացան հողակտր, թագավորը հրամայեց այնտեղ կառուցել եկեղեցի և հրավիրել հայ քահանաներ, որպեսզի հայերը կարողանան հետևել իրենց հավատքին: Լսելով այդ մասին՝ հայերը եկան Աքքարաբատ, որտեղ Աքքարը նրանց ընդունեց մեծ հարգանքով⁷: Ագրայում հաստատվելու հենց սույն օրերից նոր եկած հայերը հիմնում են առևտրական հաստատություններ և արհեստավորական տներ⁸:

Եզվիտ քարոզիչ հայր Ֆելիքսը, որ XVII դ. երկրորդ կեսին եղել է Ագրայում, վկայում է. «Ագրայի հայ գաղութը իր գլուխ ունենալով մի եպիսկոպոս և քահանաներ, անկասկած անեցից կարևորն էր, որ սկսում է վաղուց՝ 1585 թվից: Նրա անդամներից շատերը բարձր դիրքեր ունեին Աքքարի և նրա հաջորդների արքունիքներում: Նրանցից ոմանք հարուստ վաճառականներ էին...»⁹:

Մեզ հասած պատմական բազմաթիվ փաստեր խոսում են այն մասին, որ Աքքարն այնքան մեծ վստահություն է ունեցել հայերի նկատմամբ, որ իրեն շրջապատող վերնախավի մեջ զգալի տեղ է տվել նրանց: Այսպես. եվրոպական աղբյուրների հաղորդման համաձայն, հատկապես զգալի է եղել պալատում աշխատող հայ դիվանագետ-թարգմանիչների թիվը, որոնց մեջ հատուկ բարձր դիրք է ունեցել պորտուգալացիների մոտ կրթություն ստացած Գոմինիկո Պայրեսը: Ենթադրվում է, որ այս հայ թարգմանիչը իր անունը ստացել է Գոայում Եստմնառության տարիներին: Պահպանվել են Աքքարի կողմից Գոայի պորտուգալական փոխարքային 1582 թ. ուղարկված երկու նամակ, որոնցում նշված է, որ իր մոտ ուղարկվողներից մեկը «հայ քրիստոնյա թարգմանիչ Պայրեսն է»¹⁰: Հնդկաստանի գահակալը այնքան է գնահատել իր հայ թարգմանին, որ անձամբ մասնակցել է Ճաթեպուր Սիքրիում կայացած նրա հարսանիքին¹¹: Ուղիղ տասը տարի անց, 1592 թ. Աքքարի արքունիքում հանդիպում ենք Գրիմոն սարկավագ անունով մեկ այլ հայ թարգման-դիվանագետի: Նրա մասին միակ տեղեկությունը պահպանվել է դարձյալ Աքքարի կողմից եզվիտներին ուղարկած մի նամակում՝ «Գրիմոն հայ» ձևով¹²:

Հայտնի է եղել Աքքարի թագուհիներից մեկը՝ Մարիամը, որը հայտնի է Մարիամ Ջամանի Բեգում անունով¹³:

Հայր Հոսթենը Աքքարի հայազգի թագուհու՝ Մարիամի մասին խոսելիս նկարագրում է իր տեսած մի յուզանկարը, որն ունի «Ջալալադդին Աքքարը Մարիամ Ջամանի Բեգումի հետ» գրությունը: Ըստ Հոսթենի հավաստիացման, «Մարիամի պարանոցին կա գեղեցիկ մարգարտյա մանյակ, որից կախված է ոսկյա խաչ: Մարիամի մեջքին կապված է շատ ընտիր ոսկյա գոտի, որը զարդարված է հայկական արվեստի ոճով: Գլխի շորը հայկական տարազ է հիշեցնում»¹⁴:

⁵ M. Seth, An armenian Grandee of the Mogol court, Calcutta, 1932, p. 14: Fr. Felix, O. C., Cathlic Calender and Directory for Archdiocese of Agra... Calcutta, 1907, p. 264, Ed. Maclagan, The Jesuitis and the Great Mogol, London, 1932, p. 271.

⁶ Թ. Խոջամայան, Պատմություն Հնդկաց, Կալկաթա, 1849, հ. 1, էջ 89:

⁷ «Ազգասեր», Կալկաթա, 1845, էջ 68:

⁸ Ա. Ալպոյանեան, Պատմություն հայ գաղթականության, Գաթիբե, 1961, հ. Գ, մասն Ա, էջ 899: Ա. Գ. Աքքարյան, ճշվ. աշխ., հ. Ա, էջ 447:

⁹ S. H. Hosten, A christian Grandee of three Great Mogols, with notes and Ak-bars christian wife and the Indian Bourbons, p. 290.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 178:

¹² Գ. եպ. Փլյատեան, Ագրայի հայերը, Բեյրութ, 1968, էջ 28:

¹³ M. J. Seth, Armenians in India, p. 163, Ani Basil, The Armenian settlements in India, Calcutta, p. 7.

¹⁴ S. H. Hosten, Նշվ. աշխ., էջ 151—152:

1570 թ. Ագրայից 22 մղոն հեռավորության վրա Աքքարը հիմնեց հեքիաթային գեղեցկություն ունեցող իր նոր մայրաքաղաքը՝ Ճաթեփուո Սիքրին, ուր տեղափոխեց իր պալատը: Նրա հետ նոր մայրաքաղաք տեղափոխվեցին նաև բոլոր պալատականները, կառավարությունը: Սկսվեց մրցություն շքեղ պալատների կառուցման համար: Նման մի պալատ էլ կառուցեց Մարիամի համար¹⁵: Այն գրեթե առանց խաթարվելու կանգուն է և այսօր, որի քաղմաթիվ շքեղ որմնանկարների մեջ տեսնում ենք տասնյակ խաչեր, որոնք ունեին քացարձակ հայկական ոճ¹⁶:

Ենթադրվում է, որ Մարիամը պալատում ծառայության մեջ գտնվող Հուլիանայի քույրն էր (Հուլ-Գարնայնի մորաքույրը), որի վաղաժամ մահից հետո նրա երկու որբերին Աքքարի հանձնարարությամբ իր խնամքի տակ առավ Մարիամը: Այստեղից էլ այն տարածված հավաստիացումը, որ հայ երեխաները մեծացել են Աքքարի պալատում, եղել են Հնդկաստանի գաճակալի հոգեզավակները¹⁷:

Աքքարի կառավարման շրջանի աղբյուրները պալատում մեծ դիրքի հասած հայերից միշտ են մեկ այլ հայունու՝ Հուլիանային: Հուլիանան Աքքարի կանանցի թժկուհին էր: Նրան Աքքարը հետագայում ամուսնացրեց Ֆրանսիայից Հնդկաստան եկած իշխանական ծագում ունեցող Ֆիլիպ Բուրբոնի հետ¹⁸:

Կաթոլիկ միսիոներների տոմարներում Դ. եպ. Փոլատյանը այս հայունու մասին հայտնաբերել է հետևյալը. «Ագրայի եկեղեցին (խոսքը կաթոլիկների եկեղեցու մասին է—Ռ. Ա.) կառուցել են տվել Ֆիլիպ Բուրբոնը և նրա հայագոհ կինը՝ Հուլիանան, որը կայսեր կանանցի թժկուհին էր: Երկուսն էլ թաղված են այս եկեղեցում, և հավանական է, որ տապանազարդը հայերենով են»¹⁹:

Ուսումնասիրողներից ոմանք, խոսելով Ագրայի գաղթօջախի հին շրջանի հայ գործիչների մասին, միաբերան հիշատակել են Միր Աբդլ Հայի մասին, որպես Աքքարի «Ռատավորապետի», կրոնական և աշխարհիկ վեճերի կազմակերպիչ: Անգամ Դ. եպ. Փոլատյանը գրել է, որ նա իբր ունեցել է «էմիրի աստիճան» և եղել է Աքքարի դատախազը²⁰: Իրականում, սկսած Մ. Սեթից, տեղի է ունեցել թյուրիմացություն: Քաղաքական իրոք շատ խոշոր գործիչ Միր Աբդլ Հաքը շփոթվել և դարձվել է Աբդլ Հայ:

Հիշյալ մարդիկ չէին, իհարկե, որ կազմում էին հայ գաղթօջախի կորիզը: Ագրայի և շրջակայքի հայ գաղթօջախների բնակչության հիմնական տարրը եղել են հայ վաճառականներն ու առևտրի հետ կապված արհեստավորները, ինչպես նաև նրանց մոտ աշխատող քաղմաթիվ մանր ծառայողներն ու գործակալները: Ռալֆ Ֆիթչը, որ 1585 թ. սցցեկվ է Ագրա և Ճաթեփուո Սիքրի, գրել է, որ ի թիվս մյուսների տեղում տեսել է հայերի հարուստ առևտրատներ, արհեստավորական խանութներ և կրպակներ: XVI դարի վերջի Ագրայի հայկական գաղթօջախի տնտեսական ծաղկուն վիճակի մասին է վկայել նաև պորտուգալացի ծովագնաց Խորոմ Կասավեն, որը պատվիրակության կազմում այցելել է Ագրա²¹:

Ագրայի դերի բարձրացման հետ է կապված նաև տեղի հայ գաղթօջախի վերելքն ու ծաղկումը: Հայերը, օգտվելով Աքքարի հովանավորությունից, սկսել են գործուն մասնակցություն բերել երկրի տնտեսական կյանքին: XVI դարի վերջի և XVII դ. սկզբի Ագրայի մասին եզվիտ քարոզիչ Օ. Ֆելիքսը գրել է. «Ագրայի հայ գաղութը սկիզբ է առել շատ վաղուց, 1585 թվականից: Նրա անդամները արքունիքում շատ բարձր դիրք ունեին Աքքարի և նրա հաջորդների օրոք...»²²:

XVII դարի Ագրայի հայ գաղթօջախի իրավիճակի, հատկապես նրա սոցիալական կազմի մոտավոր պատկերը տալիս են հայկական գերեզմանատան վիմագիր արձանագրությունները: Հայ մեծանուն վաճառականների կողքին այստեղ հանդիպում ենք պետական ու քաղաքական գործիչների, դեսպանի («էլչի»), զինվորականների («կոմենդաթ»),

¹⁵ Նույն տեղում, էջ 156:

¹⁶ M. J. Seth, Armenians in India, p. 88.

¹⁷ Ք. Խոջամալյան, Պատմություն Հնդկաց, Կալկաթա, 1849, էջ 87:

¹⁸ M. J. Seth, Armenians in India, p. 97—98, Ed. D. Maclagan, The Jesuit missions to the Emperor Acbar from notes recorded by the late General R. E., 1896, IV, p. 9, O. C. Felix, Catholic Calendar and Directory for Archdiocese of Agra, London, 1867, p. 204.

¹⁹ Դ. եպ. Փոլատյան, Նշվ. աշխ., էջ 81—82.

²⁰ Ani Basti, Armenian settlements in India, p. 3, Ա. Ալպոյաճեան, Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, մասն Ա, էջ 287, Դ. եպ. Փոլատյան, Ագրայի հայերը, էջ 22:

²¹ P. A. Абрамян, Армянские источники XVIII века оо Индии, Ереван, 1962, стр. 81.

²² O. C. Felix, The Afgan christians, p. 33.

«քափիթան», «ի մեջ պատերազմի գուլուխով մահ առած իշխան»), զինագործների, քա-
րակոփ վարպետների և այլ զանազան արհեստագործների ու ծառայողների: Եթե հաշվի
առնենք այն հանգամանքը, որ շքեղ դամբարանների, մատուռների և տպավորիչ շիրմա-
քարերի կողքին նույն գերեզմանատանը հանդիպում ենք նաև քաղմաթիվ գեղանատարած
գերեզմանների, որոնք ոչ միայն արձանագրություն, այլև շիրմաքար իսկ չունեն իրենց
վրա, այս պարզ կդառնա, որ Ագրայի հայ գաղթօջախում հիմնական տարրը կազմել է
հայ աշխատավոր ժողովուրդը, որը, ինչպես պարզվում է գերեզմանատան արձանագրու-
թյուններից, այս հեռաստանն էր հասել Ջուղայից, Երևանից, Կ. Պոլսից, Ղարաբաղից,
Ղարսից, Թրիխիսից և այլ վայրերից:

Ա. Այվոյանը խոսելով Հնդկաստանի տարրեր քաղաքների գերեզմանատներում
հայտնաբերված գերեզմանաքարերի վրա եղած այն արձանագրությունների մասին, որոնք
հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հայ գաղթօջախների սոցիալապահան
կազմի մասին, իրավամբ գրել է. «Այս արձանագրությունները միևնույն ստեղծ գորավոր
պայացույց են, որ հայերը սոսկ եսասիրաբար իրենց համար չեն աշխատած և միայն դրամ
դիզելու չեն ձգտած, այլ ծառայած են նաև երկրին, իրեն պաշտոնատերեր, զորապետներ,
ոսպաններ, թնդանոթածիզ և թնդանոթ ձուլողներ, անշուշտ, ի շահ տերության և ոչ թե
իրենց անձին: ... Այս տապանաքարերը իրենց արձանագրություններով իսկապես կաղա-
ղակեն, որ հոն ապրած է ԺԾ դարին մինչև ԺԹ դարուն սկիզբը երկու կամ երկու ու կես
դարու ժամանակամիջոցին մեջ հայ գաղութ մը ոչ միայն վաճառականներու, այլ և պե-
տական պաշտոնատարներու, զինվորականներու և արհեստավորներու, որոնք ապահո-
վաբար քաջալերուած էին մոնկոլ վեհապետներէն»²⁵:

Ոչ միայն Ագրայի, այլև ողջ հնդկահայ և հայ-հնդկական հարաբերությունների պատ-
մության մեջ առավել հետաքրքիր դեմքերից է հնդիկ պետական, հասարակական-քաղա-
քական գործիչ, քանաստեղծ, երգահան և երգիչ Միրզա Ալեքսանդր Ջուլգարնալը: Նրա
մասին նույնիսկ ստեղծվել է պվանդագրույց, որը գրի է առել Թովմաս Խոջամալյան Ջու-
ղայեցին: Նրա վերաբերյալ մեծաթիվ փաստական տվյալներ կան կաթոլիկ քարոզիչներ
Հ. Հոսթենի²⁶, Ֆրանցիզ Կորսիայի և Անտոնիո Բոթելոյի գրագրություններում²⁷, որոնք
հրատարակվել են առանձին գրքով (երկրորդ հատորը ամբողջությամբ նվիրված է հայ-
ագոյի Միրզա Ջուլ-Գարնային):

Ըստ մեզ հասած պվանդագրույցի, Աքքարի թագավորության տարիներին Հնդկաստան
էր եկել Հակոպեան (Հակոբ) անունով մի հայ վաճառական և հաստատվել Քաշմիրում:
Այս քաղաքն այցելած Աքքարը պատահականորեն տեսնելով այդ հայի երեխային, շատ է
հավանել նրան, ու քանի որ այդ ժամանակ ինքը երեխաներ չուներ, որդեգրել է նրան
ու ծնողների հետ տեղափոխել Ագրա: Մայրաքաղաքում հայ մանուկը մեծացել է Աքքարի
մեկ տարի անց ծնված պվագ որդու՝ Ջահանգիրի հետ և Աքքարի մոտ ծառայող Իսկան-
դարի մահից հետո սուսցել է Լահորի և Ջամբահարի կառավարչի պաշտոնը: Հետագայում
գծովելով արդեն գահակալ դարձած Ջահանգիրի հետ, նա հետացել է քաղաքական աս-
պարեզից և իրեն նվիրել քանաստեղծության, երգ ու երաժշտության ու դարձել հռչակա-
վոր դեմք:

Այս պվանդագրույցը վերցնելով Թ. Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկացի» ձեռագիր
քննադիր, հրատարակել է հնդկահայ պարբերական «Ծտեմարանը»²⁸, ապա նաև «Ազգա-
սերը»²⁹: Ավանդագրույցին այնուհետև անդրադարձել է Ալ. Երիցյանը, համառոտակի վե-
րապատմելով «Ազգասերի» հրատարակածը³⁰: 1918 թ. Գ. Առնյանը հիմք ընդունելով
«Ծտեմարանի» հաղորդածը՝ «Հայկաշինու» հրատարակել է «Հայագոյի հնդիկ քանաստեղծ
XVI դարում» հոդվածը³¹:

Գ. Առնյանը ևս վերապատմելով պվանդագրույցը, աշխատել է «ապացուցել», որ
այնտեղ հանդիպող «Ջուլ-Գարնայը» հայկական աղավաղված «Սուրեն» անձնանունն է:
Առանց մանրամասնությունների մեջ խորանալու նա ենթադրել է, որ «Ծտեմարանի» խըմ-
բագիրը պվանդագրույցը թարգմանել է անհայտ «Հնդկաց պատմությունից»:

²⁵ Ա. Այվոյանեան. Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Գ, մասն Ա, էջ 559:

²⁶ S. H. Hosten, Mirza Zul-Qarnain, A christian Grantee of three Great Mogols—
«Memoirs of the Asiat Society of Bengal», Calcutta, 1916, p. 316.

²⁷ Francis Corsia and Antonio Botello, Memoirs of the Asiat Society of Bengal,
vol. V. (Jesuit letters and Allied papers on Mogol, Tibet, Bengal and Birma, Part II
Mirza Zul-Qarnain, pp. 115-194).

²⁸ «Ծտեմարան», 1822, էջ 383—389:

²⁹ «Ազգասեր», 1845, № 8:

³⁰ Галера «Кавказ», Тифлис, № 81—82 за 1883 г.

³¹ «Հայկաշին», 1918, 509—510:

Գ. Լևոնյանի հողվածը 1919 թ. վերահրատարակել է «Փյունիկ», որը հենց հաջորդ համարում տպագրել է պրոֆ. Վ. Թիրաքյանի ամսակը³⁰, որում գիտական բացատրություն է տրված «Զուլ-Գարնայն» անվանը. դա արաբերեն «երկեղջուր» բառն է և կապ չունի «Սուրեն» անձնանվան հետ: Մի քանի համար անց «Փյունիկը» տպագրել է Ծախամ Նաթալիի հողվածը³¹, որում հեղինակը ոչ միայն գիտականորեն վերլուծել է ավանդազրույցը, այլև հնդկական «Ռատհամայան», հայտնաբերել և աշխատությանը կցել է իր համոզմամբ Զուլ-Գարնայնի գրչին պատկանող մի շարք բանաստեղծություններ: Իր աշխատության երեք ծավալուն գլուխները Զուլ-Գարնայնին է նվիրել Մ. Սեթը, հարյուրավոր փաստեր մատուցելով նրա գործունեության վերաբերյալ³²: Մենք ևս ժամանակին անդրադարձել ենք այս հարցին և ուսուցիչի թարգմանելով մեզ հասած ավանդազրույցը, ծանոթագրություններով և ուսումնասիրությամբ հանդերձ հրատարակել այն³³:

Համառոտ անդրադառնանք ավանդազրույցի վավերականության խնդրին: Ժամանակաշրջանի ամենից մանրամասն սկզբնաղբյուրներն անգամ Աքքարի կողմից հայ երեսակի որդեգրելու փաստը չեն արձանագրել: Այդ մասին լուրս են հաս Արուլ-Ֆազլի-ի «Աքքար Եամե», «Աին-ի Աքքարի», Նիզամ-ուլ-դին Ամնադի «Թարաքատ-ի Աքքարի», Բադաուսի «Մանթաք-ուտ-Թավարին» հավաստի ժամանակագրությունները: Բոլորովին այլ պատկեր է պարզվում Զահանգիրի (1605—1627) ժամանակաշրջանի սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից: Անգամ Հնդկաստանի գահակալի ինքնակենսագրականի՝ «Ցուդիկ-ի Զահանգիրի» էջերում բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ կան Զուլ-Գարնայնի վերաբերյալ: Նրա մասին Զահանգիրը հետևյալն է գրել. «Զուլ-Գարնայնը մեզամիջ իրավունք ստացավ գործելու որպես Զամբահարի կտավարիչ: Նա Իսկանդարի՝ այն հայի որդին է, որը ծառայության մեջ էր Արշաշիանի (Աքքարի— Ռ. Ա.) մոտ, որը նրան կնության էր տվել Աղլ Հայի թագավորության մեջ ծառայող հայի աղջկան: Այդ հայն ուներ երկու որդիներ: Նրանցից մեկը Զուլ-Գարնայնն էր, որը խելոք էր և սիրում էր աշխատել: Նրան իմ գահակալության տասիքներին զիսավոր դիմանները վստահել էին Զամբահարի աղահանքերի մշակման կտավարիչի պաշտոնը, որը նա տանում էր ամենայն քարեկոնքությամբ: Այժմ նա նշանակված է այդ շրջանների կտավարիչ»³⁴:

Զուլ-Գարնայնի՝ Աքքարի կողմից որդեգրելու ավանդադատումը, հավանաբար, տանցել է այն հիմքը, որը պատմում են տասնյակ եզվիտ քարոզիչներ: 1628 թ. Ֆրանցիսկո Կոսսին իր գեկուցագրերից մեկում գրել է. «Թագավորը (Զահանգիրը— Ռ. Ա.) սիրում է Զուլ-Գարնայնին, որպես թագավորական ընտանիքում դաստիարակված անձի: Թագավոր Աքքարի հրամանով թագուհիներից մեկին նա կոչում էր մայր, իսկ իրեն՝ Աքքարին՝ հայր»³⁵:

Ատուլել մանրամասն է մեկ այլ սկզբնաղբյուր. «Երբ Հնդկաստանում թագավորում էր Աքքարը, պալատ եկավ մի հայ մարդ՝ Միրզա Իսկանդար անունով: Թագավորը հրամայեց նրան հարգանքով ընդունել, քանի որ, չնայած այն բանին, որ նա երիտասարդ ջենտլմեն էր, մեծ տաղանդի տեր լինելուց բացի, տիրապետում էր շատ լեզուների, այդ թվում նաև պորտուգալերենին: Մի քանի տարի նա ապրել էր Հնդկաստանի զանազան քաղաքներում, զբաղվել էր առևտրով: Աքքարը ոչ միայն հային շնորհեց բարձր կոչում, այլև կնության տվեց նրան պալատում ծառայող մի պատվարժան հայի՝ Խոջա Աբդուլայի դստերը, որին ես նույնպես գիտեի: Ընդհանրվ այդ կապի Միրզա Իսկանդարը պալատում դարձավ առավել հարգելի: Սրա առաջին որդին էլ հենց մեր կոչեջի հիմնադիր Միրզա Զուլ-Գարնայնն է»:

Զուլ-Գարնայն անունը նրան շնորհել էր ինքը՝ գահակալը, դրանով արտահայտելով իր համակրանքը: Դա Ալեքսանդր (Մակեդոնացի) Մեծի անունն էր, որին հնդիկները կոչում են Սկանդեր Զուլ-Գարնայն»³⁶:

Թ. Խոջամալյանը գրել է, որ Աքքարի մահից հետո նոր գահակալ Զահանգիրի և Զուլ-Գարնայնի հարաբերությունները սրվեցին այն քանի հետևանքով, որ Զամբահարի կտավարիչը իբր չի գնացել վեհապետին շնորհավորելու: Իրականում պատճառն այլ էր: Զահանգիրն ուզում էր բռնի հավատափոխ անել Զուլ-Գարնայնին: Նշանավոր Եվսեպոս-հորդ Էնարդը Հնդկաստանին նվիրված իր ուղեգրություններում գրել է. «Զամբահարի Զագիրդար Զուլ-Գարնայնը, որն ազգությամբ հայ էր և Հնդկաստանի ամենից հարուստ մարդը, Զահանգիրի կողմից բանտ նստեցվեց: Նա ազնվորի մի առաջնից ենթարկվեց, որ գրեթե սնանկացավ: Մոտեցավ ուր լարճ փրկագին. Զուլ-Գարնայնը գործ էկավ քան-

³⁰ «Փյունիկ», Նյու-Յորք, 1919, էջ 546—548:

³¹ Նույն տեղում, էջ 578—580:

³² M. J. Seth, նույն տեղում:

³³ P. A. Abraham, *Армянские источники XVIII века об Исламе*, стр. 71—82, 177.

³⁴ S. H. Hosten, *Mirza Zul-Garnain...*, p. 153.

³⁵ Նույն տեղը, էջ 89:

³⁶ Թ. Խոջամալյան, *Պատմություն Հնդկաց. էջ 87:*

տից: Կարճ ժամանակ անց վերականգնվեցին թագավորի ու նրա բարեկամական հարա-
բերությունները: 1649 թ. նա նորից տիրացավ իր Զագրիին: Սակայն շուտով ստիպված
եղավ թողնելու պետական ծառայությունը և քաշվեց Դելի»:

Զուլ-Գարնայնի կյանքի վերջին շրջանի վերաբերյալ Թ. Խոջամայանը գրել է. «Այ-
նուհետև հրաժարեալ նորա յամենայն երևելի գործոց, ետ զինքն խաղ կանչելոյ, որ Հընդ-
կաց լեզուով «նագ» ասեն, և այնքան յառաջացաւ, որ ի հնոց լաւ կանչողացն պակաս
չմնաց, որպէս ի Հընդկաց «Ռագմայայ» անուանեալ գրքոջ անունն հոչակեալ է.»³⁷:

Պահպանվել են հնդկական ու եվրոպական բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնք հաս-
տատում են, որ Զուլ-Գարնայնը իրոք եղել է իր ժամանակի խոշոր երաժիշտներից մեկը:
Այդ մասին վկայել է անգամ Հնդկաստանի գահակալ Զահանգիրը: «Զուլ-Գարնայնը,—
գրել է նա,— հնդկերեն երգերի ստեղծման կատարյալ վարպետ է: Այս արվեստի ուղղու-
թյամբ նրա ստեղծագործական եղանակը ճիշտ էր: Նրա ստեղծագործությունները հաճախ
էին ներկայացվում ինձ և արժանանում իմ հավանությանը»³⁸:

Մ. Սեյք Բրիտանական թանգարանում պահվող «Փաղիշախ նամեխ» մի ձեռագրից
քերել է շատ հետաքրքիր մեջբերում, որից հայտնի է դառնում, որ Զուլ-Գարնայնը Ծահ
Զահանի կողմից երկրի մայրաքաղաքը Ագրայից Ծահախանաքաղ տեղափոխելու առիթով
գրել է ընդարձակ մի պոեմ: Կաթոլիկ քարոզիչներից մեկը վկայում է, որ «Թագավորը
առաջարկեց Միրզա Զուլ-Կարնայնին, որն իր վարպետությամբ շատ էր բարձր մյուս
եղածներից, գրելու մի համապատասխան պիես-թատերախաղ կամ պոեմ՝ նվիրված մայ-
րաքաղաքի տեղափոխմանը: Միրզան կենտրոնացրեց իր ամբողջ տաղանդի մեծությունը
և գրեց բանաստեղծություններ, որոնք կատարյալ էին, սակայն որոնցում նա չէր գովեր-
գում թագավորին»³⁹:

Զուլ-Գարնայնին, որպես խոշոր երաժշտի ու բանաստեղծի, հիշատակել է Ադել Սա-
լահը՝ Ծահ Զահանին նվիրված իր սովորածավալ աշխատանքում «Զուլ-Գարնայն Ֆե-
րեհգի», այսինքն «քրիստոնյա», «օտարական», «եվրոսյացի»⁴⁰: Նույն (Զուլ-Գարնայն
Ֆերեհգի) ձևով նրան հիշել է նաև Ալ. Ռոջերսը⁴¹:

Ինչպես արդեն ասել ենք, Ծահան Նաթալիին հաջողվել է հայտնաբերել և թարգմա-
նաբար տպագրել բանաստեղծի տասներկու քառյակները: Ավելին, դժբախտաբար, առայժմ
հայտնի չէ:

Կալկաթայում հրատարակվող «Ազգասեր Արարատեան» պարբերականում հրատարակ-
վել է շատ հետաքրքիր փաստ այն մասին, որ Ծանդերնագորում երկար ժամանակ պահ-
վում էր պղնձյա մի տախտակ, որի վրա փորագրված էր Մեծ Մողոլի հրամանը՝ Հուզլին
որպես ջագիր Զուլ-Գարնայնին հանձնելու վերաբերյալ⁴²: Միքել Անջելո Լուպոլին 1619 թ.
Լահորից Գույ ուղարկած իր հաշվետվության մեջ գրում է. «Մեր հաջողությունները մեծ են
հատկապես Մողոլի այն շրջաններում, ուր որպես նահանգապետ կառավարում է Հայաս-
տանի ծնունդ, քրիստոնյա Միրզա Զուլ-Գարնայնը: Օգտվելով թագավորի մեծ սիրուց՝ նա
իրեն հզոր է գտնում: Երբ աղքատների թիվը զգալի չափով մեծացավ, նա մոտ երկու հար-
յուր մարդ տարավ իր մոտ և պահեց մեծ հոգատարությամբ:

Ագրայի հայ գաղթօջախի 1624—1648 թթ. պատմության համար հետաքրքիր փաստեր
է հաղորդում Մոնրիկի «Ուղեգրությունը»: Նրա վկայության համաձայն, այս ժամանակա-
շրջանում Ագրայի հայկական գաղթօջախը հասել էր իր գերագման գագաթնակետին:
Նա հատկապես նշում է Ագրայի հայկական քարվանսարայի մասին, որտեղ հայերն իրենց
գրասենյակներում կնքում էին առևտրական գործարքներ, պայմանագրեր, քննարկում էին
համայնքի ներքին կյանքին վերաբերող հարցեր և այլն⁴³: Ըստ Մոնրիկի հաղորդման, այս
«Քարվանսարա» կոչվածը հայտնի էր անգամ Եվրոպայում: Ագրա եկած շատ օտարերկ-
րացիներ այնտեղ ստանում էին գործարար խորհուրդներ⁴⁴:

Ագրայի հայ գաղթօջախի քարավան վիճակը երկար չտևեց: 1658 թ. Մեծ Մողոլի
գահաւալ Աուրնգզեբը Դելիի մոտ կտուցեց մի նոր քաղաք, Ագրայից մայրաքաղաքը
տեղափոխեց այնտեղ՝ անվանելով այն Աուրանգաբադ: Ագրան հետզհետե անշուքացավ
և խամրեց: Անտոնիո Բոթեկլուն, որն Ագրա է այցելել XVII դ. կեսերին, այստեղ հաշվել է

³⁷ Թ. Խոջամայան, նշվ. աշխ., էջ 121:

³⁸ Travels of Frau Sebastian Monrigne, 1629—1643, vol. II, p. 151.

³⁹ Earliest travels in India 1583—1619, edite by Hosten, London, 1890, p. 122.

⁴⁰ Ed. Maclogan. The Jezuit Missions, vol. II, p. II.

⁴¹ S. Hosten, Memoirs of the Asilik Society of Bencal, vol. 5, p. 116.

⁴² M. J. Seth, Armenians in India, p. 164.

⁴³ Earliest travels in India 1583—1619..., p. 267.

⁴⁴ A. Bazil, նշվ. աշխ., էջ 9:

60 տուն հայ: Գրեթե նույն ժամանակի հայ գաղթօջախի մասին է խոսել նաև ճանապարհորդ Սերաստյան Մոնրիկը⁴⁵:

Խոսելով Ագրայի հայկական գաղթօջախի մասին, ժամանակին թյուրիմացաբար հայտնել ենք այն կարծիքը, որ հայկական կյանքը այստեղ դադարել է 1658 թ., Մեծ Մողոլի կայսրության մայրաքաղաքը Դելի տեղափոխելու հետ միաժամանակ: Իրականում դա այդպես չէ: 1988 թ. այցելելով Ագրա՝ տեղի ռայկական գերեզմանատանը տեսանք շիրմաքարեր, որոնք թվագրված են մինչև 1919 թվականը: Ագրայի հայկական համայնքը ունեցել է իր քահանաները⁴⁶: Միայն Ագրայի հայոց գերեզմանատանը թաղված են վեց քահանաներ (1614՝ Աստվածատուր, 1614՝ Մխիթար, 1630՝ Սուքիաս, 1671՝ Բաղդասար, 1776՝ Հարություն, 1816՝ Պետրոս): Այս փաստը խոսում է այն մասին, որ հայկական գաղթօջախը դեռևս մինչև 1816 թ. գոյատևում էր:

Թվապես նվազած հայկական գերեզմանատանը փորձել են տեր կանգնել կաթոլիկները: Համայնքի քահանան բողոքել է այս ապօրինության դեմ և տեր կանգնել հայերի իրավունքներին:

Կյանքի վերջին տարիներին այստեղ է ապրել Գվալտորի իշխանության գորքերի գրեխավոր հրամանատար գեղապետ Հակոբ Պետրոսը:

XIX դ. կեսերին Ագրայում հիշվում են պետական ծառայության մեջ գտնվող մի քանի հայեր՝ Մատուր Հարություն, Ջաքարիս Բարսեղյան, որը պետական ծառայության մեջ էր և իր մոր հետ սպանվեց 1857 թ. ապստամբության ժամանակ⁴⁷:

Հայտնի է, որ Բարսեղյան ազգանունով մեկ այլ հայ, որը եղել է «Ագրայի հարկահավաքը», ուղարկեց Ֆաթեհիուտ Սիբրին պաշտպանելու ապստամբներից: Բարսեղյանը կարողացել է գորք հավաքել և կորելով Դելի Ֆաթեհիուտ Սիբրի ուղիները, հնագույն մայրաքաղաքը փրկել խժոժություններից⁴⁸:

Այլ ճակատագիր էր փհնակված մեկ այլ հայի՝ Ըջանավոր գեղապետ Հակոբ Պետրոսի որդուն, որը նույնպես Հակոբ Պետրոս անուն, ազգանունն ուներ: Ապստամբության օրերին անգլիական իշխանությունները նրան ապահովության համար հրավիրեցին պատասպարվել Ագրայի միջնաբերդում, բայց հավատալով իր ծառաների և զինվորների հավատարմությանը, հրաժարվեց: Հայ զինվորականը զոհ գնաց իր միամտությանը⁴⁹:

Այս եղեռական մահով փաստորեն Ագրայի հայկական գաղթօջախը մարեց, թողնելով որպես անցած երեմնի փառքի վկաներ 110 մամուկալած շքեղ գերեզմանաքարեր:

Р. А. АБРАМЯН — Армяне в Агре. — Делу образования и процветанию армянской колонии в Агре (Индия) способствовал один из правителей династии Великих моголов—Джалаледдин Акбар (1556—1605 гг.). По свидетельству первоисточников, Акбар отдал армянской общине участок земли в своей новой столице Агре и выделил государственные средства на ее благоустройство: в 1552 г. здесь была построена церковь для армян. Дошедшие до нас исторические документы говорят о том, что при дворе властителя было много армян дипломатов, первооткрывков, врачей, государственных чиновников. В истории не только армянской общины, но и всей Индии известен Александр Зул-Гарнайи. Об этом крупном государственном и политическом деятеле даже слагались легенды. Вот что писал известный исследователь О. Феликс об армянской колонии конца XVI—начале XVII вв.: «Армянская колония, несомненно, самая важная здесь, она возникла очень давно, в 1585 г.: члены этой общины занимали весьма высокие посты при Акбаре и его преемниках...».

⁴⁵ Earlis travels in India 1583—1613, p. 268—269.

⁴⁶ Fr. Felix, Catholic Calendar and Directory for Archdiocese of Agra and its suffragan Diocese... for the year 1907, p. 207.

⁴⁷ Տե՛ս Դ. եպ. Փռլադեան, նշվ. աշխ., էջ 28:

⁴⁸ Նույն տեղում, էջ 29:

⁴⁹ Նույն տեղում, էջ 29—30: